ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 մարտի 2018 թվականի N 82-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ 100 ՏՈԿՈՍ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՎՃԱՐՈՎԻ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ, ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՈՒ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետի՝ որոշում եմ.

1. Հաստատել՝

1) «Հրազդանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2018 թվականին բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 1 հավելվածի,

2) «Ռուբիկ Հարությունյանի անվան Արովյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2018 թվականին բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 2 հավելվածի,

3) «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2018 թվականին բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 3 հավելվածի

4) «Չարենցավանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2018 թվականին բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 4 հավելվածի,

5) «Արովյանի ծննդատուն» պետական փակ բաժնետիրական ընկերության կողմից 2018 թվականին բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 5 հավելվածի,

6) «Նոր-Հաճնի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության կողմից 2018 թվականին բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 6 հավելվածի:

7) «Հրազդանի մարզային արյան բանկ» պետական փակ բաժնետիրական ընկերության կողմից 2018 թվականին բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող բժշկական ծառայությունների տեսակներն ու սակագները՝ համաձայն N 7 հավելվածի,

8) «Կիմա Խաչատրյանի անվան Գառնիի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2018 թվականին բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 8 հավելվածի:

9) «Զովունու առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2018 թվականին բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 9 հավելվածի,

10) «Նոր Գեղիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2018 թվականին բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 10 հավելվածի,

11) «Պառջանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2018 թվականին բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 11 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի նախագահությանը առողջապահական ընկերությունների և կազմակերպությունների տնօրիններին՝

1) ապահովել բնակչության իրազեկումը Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման պահանջների մասին,

2) ապահովել կազմակերպությունների կողմից վճարովի սկզբունքով տրամադրվող ծառայությունների մատուցումը համաձայն հաստատված գնացուցակի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի ապրիլի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2018 թվականի մարտի 28
ք. Հրազդան